ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ СООБЩЕНИЯ

ԷՋԵՐ ՀԱՅ-ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Զ. Մ. ՂԱՍԱԲՅԱՆ

Բալկաններում, Բուլղարիայի այժմյան տարածքում, VI դարից սկսած. արտագաղթի և բյուզանդական կայսրերի կազմակերպած բռնագաղթերի հետևանքով առաջացան առաջին հայկական գաղթավայրերը, որոնք հետագայում, երբ կազմավորվեց Ասպարուհի սլավոնա-բուլղարական պետությունը (681 թ.), զգալի դեր կատարեցին Բյուզանդական կայսրության և Բուլղարական պետության տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում։ VIII դարի սկզբից հայ ժողովրդի նոր զանգվածների գաղթի հետևանքով Բալկաններում ստեղծվեցին ավելի մեծաքանակ գաղթօջախներ։ Բուլղարահայ գաղութի պատմությունը, նրա զարգացման ամբողջ ընթացքը ներհյուսված է բուլղար ժողովրդի պատմության հետ։ Հայերի և բուլղարների՝ օտար լծից ազատագրման մարտերի ընթացքում կոփվեցին և ամրապնդվեցին նրանց փոխադարձ օգնությունն ու եղբայրությունը։ Հայ-բուլղարական պատմական կապերին, բուլղարահայ գաղթօջախների առանձին հարցերին են նվիրված Ռ. Հ. Խաչատրյանի, Ս. Վ. Հովնանյանի, Հ. Մ. Բարթիկյանի, Կ. Հ. Ճինգոզյանի և ուրիշների աշխատությունները[1]։ Հայ ժողովրդի պատմության առանձին հարցերին և բուլղարահայ գաղութի ընդհանուր զարգացման պրոբլեմներին իրենց աշխատություններում անդրադարձել են բուլղար պատմաբաններ, բանասերներ, հասարակական-քաղաքական գործիչներ Վ. Զլատարսկին, Յ. Իվանովը, Գ. Կացարովը, Դ. Անգելովը, Ի. Դուչևը, Վասիլ Կոլարովը, Ն. Գինևը և ուրիշներ։

Բուլղարահայ գաղութի ծագման, զարգացման և մշակութային-տնտեսական կյանքին են անդրադարձել նաև բուլղարահայ պատմաբան-բանասերներ ու քաղաքական գործիչներ Ստեփան Շահբազյանը, Անդրեաս Հակոբյանը, Ներսես Դասպարյանը, Պարույր Ասատուրը, Դանիել Ռազդրադյանը, Արմեն Սևանը, Սարգիս Փաշաճյանը, Արա Մարկոսը, Հարություն Քյուրտյանը, Վահե Չերչյանը, Միքայել Տոնիկյանը, Կարո Հայրապետյանը, Հակոբ Օրմանճյանը և ուրիշներ։ Նրանց աշխատություններն ու հոդվածաշարերը հարուստ են հայ ժողովրդի պատմության վերաբերյալ բազմաթիվ փաստական նյութերով՝ սկսած վաղ միջնադարից մինչև մեր օրերը։

Հայ և բուլղար ժողովուրդների պատմության մեջ կան շատ ընդհանրություններ։ Բուլղարագիտական առաջին միջազգային համագումարի պլենար նիստի ժամանակ, որը նվիրված էր բուլղարական պետության հիմնադրման 1300-ամյակին, Սովետական Միության ԳԱ ակադեմիկոս Դմիտրի Լիխաչովը իր զեկուցման մեջ ասաց. «Չնայած այն հանգամանքին, որ բուլղար ժողովրդի պետական զարգացման ընթացքը ընդհատվեց երկու անգամ (նկատի ուներ բյուզանդական և օսմանյան տիրապետության ժամանակաշրջանները—Զ. Ղ.), այնուամենայնիվ նա կարողացավ պահպանել իր ինքնուրույնությունը, ազգային դեմքն ու գոյությունը, որովհետև նա ուներ նաև իր «հոգևոր պետությունը»։

---

[1] Բուլղարահայ գաղութի ամբողջական պատմությանը նվիրված առաջին աշխատությունը գրել է Սուրեն Հովնանյանը, հիմնականում շարադրելով միջնադարից մինչև XIX դարի երկրորդ կեսի պատմությունը։ Հայ-բուլղարական գրական կապերին են նվիրված Կ. Հ. Ճինգոզյանի մի շարք ուսումնասիրությունները։

լեզուն, գիրն ու գրականությունը, մասամբ արվեստն ու եկեղեցու ինքնուրույնությունը հակադրվում էին բյուզանդական եկեղեցու ճնշումներին ու օսմանյան լծին։ Մեր կողմից պայմանականորեն կոչված «հոգևոր պետությունը» ժողովրդի մշակույթն է ամբողջությամբ։ Հենց այդ հոգևոր մշակույթի մեջ պահպանվել ազգային ինքնագիտակցությունը, որը դրսևորվել է ժողովրդի ազգային ինքնապահպանման ձևով»[2]։

Այդ խոսքերը կարելի է վերագրել նաև հայ ժողովրդին, որ դարերի ընթացքում պահպանելով իր լեզուն, գիրն ու գրականությունը, մշակույթի կոթողները, կարողացավ դիմադրել բոլոր տառապանքներին ու օտար լծին, վերապրել իր ազգային վերածննդը սովետական ազգերի համերաշխ ընտանիքում։

Պատմահայր Մովսես Խորենացին, Սեբեոսը, Անանիա Շիրակացին, Արիստակես Լաստիվերցին, Ստեփանոս Տարոնեցին, Մխիթար Այրիվանեցին, Կիրակոս Գանձակեցին և մյուս հայ պատմիչները հայ ժողովրդի պատմությունը գրելիս արժեքավոր տեղեկություններ են հաղորդել նաև ուրիշ ժողովուրդների՝ այդ թվում սլավոնների, նախաբուլղարների ու հարևան երկրների պեռական կառուցվածքի, ապրելակերպի ու սովորությունների, տեղաշարժերի ու պատերազմների մասին։ Նրանց գործերում տվյալներ կան նախաբուլղարների, սլավոնա-բուլղարական պետության ծագման, սլավոնների, Բյուզանդիայի և հայերի փոխհարաբերությունների մասին։ Միջնադարյան հայ պատմիչները մանրամասն տեղեկություններ են հաղորդել սոցիալ-քաղաքական այնպիսի երևույթների մասին, ինչպես պավլիկյան, թոնդրակյան և բոգոմիլյան ազատագրական շարժումները ուղղված հայկական, բյուզանդական, բուլղարական ֆեոդալական վերնախավի դեմ։

Հայ պատմիչների հաղորդումները լուրջ սկզբնաղբյուրներ են բոլոր այն ժողովուրդների պատմության համար, որոնք դարերի ընթացքում հայ ժողովրդի հետ միասին պայքարեցին բյուզանդական, սելջուկյան, մոնղոլական և օսմանյան գավթիչների դեմ։ Ուշագրավ են այն տեղեկությունները, որ վերաբերում են նախաբուլղարներին, որոնք հայոց Վաղարշակ թագավորի որդի Արշակի ժամանակ եկել և տեղավորվել են Հայկական լեռնաշխարհի տարածքներում։ Այդ տեղաշարժերի մասին Մովսես Խորենացին հաղորդում է. «Ի սորա աւուրս աղմուկ մեծ լեալ ի գօտիս մեծի լերին Կաւկասու յաշխարհն Բուլղարայ և բազումք ի նոցանէ հատուածեալք եկին յաշխարհս մեր, և բնակեցան ի ներքո Կողաչ, յարդաւանդահող և ի հացաւէտ տեղիս մինչև ի ժամանակս բաղումս»[3]։ Այնուհետև պատմահայրը շարունակում է. «Եւ ինքն արձակեալ զարևմտեայ բաղումութիւնն՝ իջանէ ի տեղիս խոտաւետս մերձ ի սահմանն Շարայի. զոր հինքն Անփայտ և Վերին Բասեան կոչէին, իսկ հետոյ վասն հատուածի Վրընդուր Բուլղարայ Վնդոյ, բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեալ մինչև ցայժմ»[4]։

Նախաբուլղարների պետությունը, Դոնի և Վոլգայի միջի լայնածավալ տարածքներում, Կուրբատի ժամանակ հասնում է իր հզորության գագաթին։ Սակայն նրա մահից հետո հինգ որդիները, չկարողանալով դիմադրել խազարների և թուրքական ցեղերի արշավանքներին, թողնում են իրենց նախահայրենիքը և շարժվում տարբեր ուղղություններով։ Կուրբատի որդիներից Ասպարուհն ու Կոբերը գնում են դեպի արևմուտք։ Անցնելով Դոն ու Դանուբ գետերը, նրանք հաստատվում են Վերին Միզիայում և Դանուբի գետաբերանի կղզիներում։ Հետագայում Ասպարուհը այստեղ հիմնադրում է բուլղարա-սլավոնական պետությունը (VII դարի վերջին)։ Այդ պետության մասին Անանիա Շի-

---

[2] Първи международен конгрес по българистика, пленарни доклади. Дмитрий Лихачов. Челната отбранителна линия на духа на българската държава. София, 1981, с. 7.

[3] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, էջ 119։*

[4] *Նույն տեղում։*

բակացին հաղորդում է. «Որ ըստ անուանց գետոյն կոչեցեալ, Կուփի Բուլղար, Դուչի Բուլղար, Ողոնտուր Բլկար, Զդար Բոլկար. օտար այժմ ի Պտղոմէականէն են այս անուանք։ ...Եւ ի Զիական լեառնէն փախեաւ որդի Խուբրադրայ։ Եւ ընդ մէջ պուլղարաց և ծովուն Պոնտոսի բնակէն ազգ... Եւ լերինք երկու եւ գետս. մի է Դանոբ որ բաժանի ի վտակս վեց, և առնէ լիճ մի եւ կղզի որ կոչի Պիւկի. ի կղզիս այս բնակեալ է Ասպար-հու որդին Խուբրասթայ, որ փախեաւ ի խազարաց ի բուլխարաց լեռնէն, եւ դնաց հալածեաց ի մուտս կոյս կաւառն ազգ, եւ բնակեցաւ անդ»։

Սլավոնա-բուլղարական պետության կազմավորման նախօրեին Բալկաններում արդեն գոյություն ունեին հայկական գաղութներ, որոնք առաջացել էին բյուզանդական կայսր Մորիկի (582—602) կազմակերպած բռնագաղթերի միջոցով։ Նա կարողացել էր Հայկական լեռնաշխարհից տեղահան անել հայկական զանգվածներ դեպի Բալկանները, նաև վարձելով հայկական բանակի առանձին զորամասեր կայսրության հյուսիսային սահմանը պաշտպանելու համար սլավոնների, հոների, ավարների և բուլղարների հարձակումներից։ Այդ մասին Սեբեոսը հաղորդում է. «Եւ հրաման ելանէ ի կայսրէ, երեսուն հազար հեծեալ վզենակալ է, ասէ, իմ ի վերայ աշխարհին Հայոց։ Արդ ԼՌ երդաւոր ժողովեսցին ինձ անտի և նստուսցին ի Թրակացւոց աշխարհին»[6]։

Արևմտյան Հայաստանի Մելիտինեի (Մալաթիա) և Թեոդոսուպոլսի (Էրզրում) շրջաններից մեծ թվով պավլիկյաններ գաղթեցին Բուլղարիա և հաստատվեցին Ֆիլիպպուպոլիս (Պլովդիվ) քաղաքում և շրջակայքում։ Գաղթը շարունակվեց X—XI դդ., երբ բյուզանդական կայսրերի օգնությամբ Գրիգոր Մագիստրոսը ճնշեց աղանդավորական շարժումները Հայաստանում։

XI—XII դդ. Բուլղարիան կորցրեց իր պետական անկախությունը։ Բյուզանդիայի տիրապետությունը Բուլղարիայի վրա շատ ծանր անդրադարձավ և ընդհատեց վերջինիս հասարակական-պետական զարգացման ընթացքը։ Բյուզանդական կայսրերը բռնագաղթերի միջոցով Բալկաններից բուլղարներին վերաբնակեցնում էին կայսրության արևելյան շրջանները։ Հայերը և բուլղարները համատեղ պայքարի են դիմում բյուզանդական կայսրերի ոտնձգությունների ու նենգ քաղաքականության դեմ։ Բուլղարիայում պավլիկյաններ, անմիջական կապերի մեջ լինելով բոգոմիլների հետ, համատեղ ելույթներ են ունենում տիրող կարգերի դեմ, ընդ որում նրանք իշխող դիրք են գրավում առանձին քաղաքներում և բնակավայրերում։ Ֆիլիպպուպոլսի նման խոշոր կենտրոնում իշխում էին հայ պավլիկյանները և բոգոմիլները[7]։

Նման համատեղ պայքար կազմակերպեցին հայերն ու բուլղարները, երբ սելջուկյան հորդաները ասպատակում էին Հայաստանը։ Արիստակես Լաստիվերցին հաղորդում է, որ սելջուկ-թուրքերի դեմ բյուզանդական բանակի կորիվներին մասնակցում էին ինչպես հայերը, այնպես էլ բուլղարներն իրենց զորավարներով։ Հայ պատմիչը ջերմ խոսքերով գովաբանում է Ահարոն Բուլղարի և նրա որդի Թոդորոսի հերոսական մարտերն ու վերջինիս մահը Անիի և Տարոնի պաշտպանության համար մղված պայքարում[8]։ Բյուզանդական կայսրի հրամանով Ահարոն Բուլղարը նշանակված էր նախ Վասպուրականի «վեստ» կամ «կատեպան», ապա՝ Անիի մագիստրոս, իսկ հետագայում, Միջագետքի մագիստրոս Գրիգոր Պահլավունու մահից հետո (1058), փոխարինեց նրան[9]։

Սելջուկները խորտակեցին Բյուզանդական կայսրության տնտեսական-

---

[5] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց. Վենետիկ, 1881, էջ 17, 25։

[6] Պատմութիւն Սեբեոսի. Աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի. Երևան, 1979, էջ 105։

[7] Երվանդ եպիսկ. Փերտահճյան. Փ. Պոլսո հայ գաղութին ծագումը և անոր եկեղեցին. Փ. Պոլիս, 1929, էջ 24։

[8] Պատմութիւն Արիստակեայ Լաստիվերտցւոյ. Վենետիկ, 1844, էջ 58։ Կ. Հ. Ճինաղյան. Հայ-բուլղարական գրական կապերի պատմությունից. Երևան, 1966, էջ 14։

[9] В. Н. Златарски. История на българската държава през средните векове. Т. 2, София, 1934, с. 535. С. В. Овнанян. Армено-български исторически връзки. София, 1972, с. 24.

քաղաքական դերիշխանությունը և ընդհատեցին կայսրության սահմաններում ընակվող ժողովուրդների սոցիալ-տնտեսական զարգացման ընթացքը։ Հետագայում, երբ օսմանյան Թուրքերը նվաճեցին Հայկական լեռնաշխարհն ու Բալկանները, Օսմանյան կայսրության սահմաններում ապրող քրիստոնյա ժողովուրդների համագործակցությունը նոր ընթացք ստացավ։ Նրանք միատեղ պայքար ծավալեցին Թուրքական դավթիչների դեմ։ Դարերի տառապանքը միևնույն լծի տակ, ազատագրական պայքարի նույն տենչն ու թափը, զանազան ուղիներով համագործակցությունը ձևավորել են եղբայրական ոգին օսմանյան տիրապետության ներքո հեծող և ազգային զարթոնք ապրող հույն, բուլղար, սերբ, չերնոգորցի, մակեդոնացի, հայ և մյուս ժողովուրդների միջև։

Ազգային-ազատագրական պայքարի հայ և բուլղար ղեկավարները երկու ժողովուրդների մեջ խոր հավատ սերմանեցին դեպի Ռուսաստանը և ռուս ժողովուրդը։ 1828 և 1829 թթ. ռուսական բանակի փայլուն հաղթանակները Կովկասյան և բալկանյան ռազմաճակատներում մեծ ոգևորություն առաջացրին սուլթանական ռասմաֆեոդալական լծի տակ ճնշված ժողովուրդների մեջ։ Թուրքմենչայի և Ադրիանուպոլսի պայմանագրերով Արևելյան Հայաստանը և մերձդանուբյան շրջանները միացվեցին Ռուսաստանին։

Օսմանյան Թուրքիայի կառավարման վայրագ մեթոդը, ազգային ճնշումներն ու կրոնական խտրականությունը, տնտեսական կողոպուտն ու հարբսահարությունները, փաշաների անզուսպ կամայականությունները կատարյալ իրավազրկության էին հասցրել հայ և բուլղար ժողովուրդներին։ Ֆիզիկական բնաջնջման եզրին էին կանգնել երկու եղբայրական ժողովուրդները, որոնց պատմական ճակատագիրը նույնանման էր։

XIX դարի 60—70-ական թթ. Օսմանյան կայսրությունը ցնցվեց մի շարք ապստամբություններից։ 1862 թ. Զեյթունի, 1875 թ. Բոսնիայի և Հերցեգովինայի, 1876 թ. բուլղարական Ապրիլյան ապստամբությունները իրենց վրա բերվեցին Եվրոպայի բազմաթիվ երկրների առաջադեմ մարդկանց ուշադրություն և զայրույթ՝ արյունալի կոտորածների դեմ։

Բուլղարական Ապրիլյան և նրա նախորդող ապստամբությունների պարտությունը վերջնականապես համոզեցին օսմանյան լծի դեմ պայքարող հեղափոխականներին, որ առանց արտաքին օգնության հնարավոր չէր ազատագրվել օտար տիրակալից։ Օսմանյան կայսրության ոտնձգությունները, Բալկանյան թերակղզում և Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցած արյունալի կոտորածները մի կողմից, ռուս և համաշխարհային առաջադեմ հասարակայնության պահանջները՝ մյուս կողմից, ցարական կառավարությանը ստիպեցին կտրուկ միջոցների դիմել, քանի որ ո՛չ Կոստանդնուպոլսի կոնֆերանսը և ո՛չ լոնդոնյան որոշումները չկարողացան լուծել Արևելյան հարցի մաս կազմող Բալկանների և Հայկական հարցի կնճռոտ խնդիրները։ 1877 թ. ապրիլի 24-ին Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային։ Ստեղծվեցին Դանուբյան կամ Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներ։ Ռուսական բանակների զորակոչման և համալրման ընթացքում կազմակերպվեցին բազմաթիվ կամավորական ջոկատներ, գնդեր ու աշխարհազորներ՝ բուլղարներից, ուկրաինացիներից, ռումինացիներից, սերբերից, չերնոգորցիներից, մակեդոնացիներից, հույներից, հայերից ու այլ ժողովուրդներից։ Կովկասյան ռազմաճակատի հրամանատարությունը մեծ մասամբ բաղկացած էր հայ գեներալներից։ Ռուսական բանակի հետ Թուրքերի դեմ կռվում էին բազմաթիվ հայեր, որոնց մասնակցությունը մեծ օժանդակություն էր Հայկական լեռնաշխարհում ռուսական բանակի առաջխաղացման համար։ Կարճ ժամանակամիջոցում գրավվեցին Կարսը, Արդահանը, Բայազետը, Էրզրումը, որ մեծ նշանակություն ունեցավ բալկանյան ռազմաճակատում ձեռք բերված հաջողությունների, մասնավորապես Պլևենի գրավման գործում։ Բազմաթիվ հայ սպաներ ու շարքայիններ մարտնչում էին նաև Բալկանյան ռազմաճակատում[10]։

---

10 Մ. Գ. Ներսիսյան. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ 1850—70 թթ. Երևան, 1955, էջ 74։

Այդ պատերազմին իրենց մասնակցությունը բերեցին նաև Բուլղարիայում ապրող հայերը։ Պլովդիվի, Պազարջիկի, Վառնայի, Կավառնայի, Ռուսեի և այլ վայրերի ազատագրման մարտերում նրանք զանազան ծառայություններով օգնում էին ռուսական բանակների առաջխաղացմանը։ Պատերազմի ընթացքում բազմաթիվ բուլղարահայեր, որոնք գտնվում էին թուրքական վարչական ծառայության մեջ և բանակում, լքում էին իրենց պաշտոնն ու ծառայությունը և անցնում ռուսական բանակի կողմը։ Այդ պատերազմում իրենց խիզախությամբ և սխրագործություններով փայլեցին Հովհաննես Սվաճյանը, Երանոս Երանոսյանը, Թագվոր Էլմասճյանը, Ստեփան Աբգարյանը և ուրիշներ։

Բեռլինի խորհրդաժողովի որոշումներով բուլղար ժողովուրդը ազգային անկախություն ստացավ։ Սակայն պայքարը սուլթանական լծի դեմ շարունակվեց Արևելյան Ռումելիայի, Արևմտյան Հայաստանի և Մակեդոնիայի ազատագրման համար։

Բուլղար ժողովրդի ազգային ազատագրումը հայ-բուլղարական կապերի ընդլայնման խթան հանդիսացավ հատկապես համիդյան ռեժիմի և նրանից հետո պարբերաբար կրկնվող հայկական կոտորածների ու շարդերի, փախուստի և գաղթի ժամանակաշրջանում։ Բուլղար ժողովուրդը եղբայրական ձեռք մեկնեց՝ ապաստան տալով հազարավոր տարագրված հայերի ինչպես 1895—1896 թթ. կոտորածների, այնպես էլ առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակ և նրանից հետո 1922 թ.[11]։

1912 թ. առաջին բալկանյան պատերազմի նախօրեին Արշակ Չոպանյանը Փարիզից գրում է հետևյալ նամակը՝ ուղղված բուլղարական կառավարության վարչապետ Իվան Գեշովին. «Այս բացառիկ պահին, երբ Ձեր ազնիվ ժողովուրդը կանգնել է պատերազմի եզրին, ես պարտավոր եմ և ինձ թույլ եմ տալիս հոգու խորքից արտահայտելու հիացմունքս Ձեր հերոս ժողովրդի նկատմամբ ու ամենայն անկեղծությամբ բարձրացնում եմ իմ ձայնը բուլղարական բանակի օգտին։ ...Մենք երբեք չենք մոռանա համիդյան ջարդերից հետո Ձեր ժողովրդի հյուրընկալությունը բազմաթիվ հայերի, որոնք հանգրվանեցին Բուլղարիա։ Նրանց արտագաղթը եղեռնի արդյունք էր։ Այժմ այդ հայերը դժվարանում են արտահայտել իրենց զգացումները։ Սակայն կովկասահայերը ամենուրեք համարձակությամբ դրում են իրենց թերթերի էջերում և արտահայտում հանդուգն որոշումներ բալկանյան ժողովուրդներին օգնելու գործում։ Ես հավատացած եմ, որ Ռուսաստանից մի մեծ խումբ ուսանողներ՝ կամավորներ, պատրաստ են ռուսների հետ կռվելու թուրքերի դեմ»[12]։

Ավարտելով իր նամակը, Ա. Չոպանյանը խնդրում է վարչապետ Ի. Գեշովին այն չհրապարակել ոչ մի տեղ, նկատի ունենալով Թուրքիայում ապրող իր եղբայրներին սպառնացող վտանգը։ Պատասխան նամակում Ի. Գեշովը Ա. Չոպանյանին ուղարկում է իր աշխատություններից մեկը, որտեղ նկարագրում է հայերի վիճակը Բուլղարիայում։

1912 թ. առաջին բալկանյան պատերազմի ժամանակ բուլղարական բանակի շարքերում զորակոչված էին բազմաթիվ բուլղարահայեր։ Այդ իսկ ժամանակ ստեղծվել էր Մակեդոնա-Ադրիանուպոլսյան աշխարհազորը 16840 կամավորներով։ Նրա կազմում Անդրանիկի գլխավորությամբ 275 հայ երիտասարդներից կազմված կամավորական գումարտակը, գեներալ Գենևի զորաբաժնի շարքերում, ակտիվորեն մասնակցեց Ֆերայի մոտ Յավեր փաշայի բանակը գերելու գործողություններին։ Առաջին բալկանյան պատերազմում զոհվածների հիշատակին հույն-բուլղարական սահմանի վրա այսօր կանգնած է մի համեստ հուշարձան, որի պատվանդանին փորագրված են բազմաթիվ հա-

---

11 Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին, քանի դեռ Բուլղարիան չէր կողմնորոշվել դեպի Գերմանիան, թուրքական բանակ զորակոչված 1500-ից ավելի հայեր լքեցին ռազմի դաշտը և անցան Բուլղարիա։

12 Централен Дръжавен Исторически Архив. София, ф. 568, оп. I, ае. 367, л. I. Նամակը գրված է ֆրանսերեն, այստեղ բերված են առանձին հատվածներ։

յերի անուններ։ «Այդ անունները օտար չեն, նրանք մեր զինակից եղբայրներն են, որոնք արյուն թափեցին իրենց հայրենիքի և բախտակից Մակեդոնիայի ու Թրակիայի համար։ Փա՜ռք հայկական գումարտակին»,— գրում է բալկանյան պատերազմի մասնակից Միլան Դամյանովը[13]։

Բալկանյան պատերազմներից հետո, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերի կառավարությունը կազմակերպեց առաջին ցեղասպան ոճիրը հայ ժողովրդի նկատմամբ։ Հայ ժողովրդի եղեռնը վրդովեցրեց և զայրույթ առաջացրեց առաջադեմ մարդկության շրջաններում։ Բուլղարիայում բողոքի հուժկու շարժում կազմակերպվեց հայ ժողովրդի եղեռնի կապակցությամբ։ 1915 թ. բոլոր հայաշատ քաղաքներում՝ Սլիվեն, Շումեն, Ռուսե, Պլովդիվ, Վառնա, Ստարա Զագորա և այլուր բուլղարների և հայերի համատեղ ժողովներ հրավիրվեցին, որտեղ ընդունվում էին բողոքի բանաձևեր Թուրքիայում կատարվող ոճիրի դեմ։ Այդպիսի մի ժողովում, որ տեղի էր ունեցել Ռուսե շաղաքի հայկական գաղութի ղեկավարության հրավերով, հետևյալ դիմումն ուղարկվեց բուլղարական կառավարության վարչապետ Ռոդոսլավովին. «Ահա տարի մըն է, որ հայ ժողովուրդը ենթակա է բնաջնջման թուրք կառավարության կողմե։ Հակառակ մեր ժողովրդի օրինական ընթացքին թուրք պետության հանդեպ, կառավարությունը սոսկալի հալածանքով, բռնություններով ու ջարդերով կոչնչացնե խաղաղ հայ ազգաբնակչությունը։ Հատուկ պատրաստված ծրագրով ան սիստեմատիկ կերպով կը հանե ամբողջ շրջաններու հայերը և կաքսորե Փոքր Ասիայի ամենախուլ անկյունները, իսկ հայ օջախները կը ղրկե մահմեդականներ և քուրտական խմբեր, պարպելու համար հայկական գավառները հայ տարրերեն։ Վաղվան զարհուրելի կատաստրոֆի նախօրյակին մենք, Ռուսեի հայերս, հավաքվելով այսօր սգալու համար մեր թանկագին նահատակ զոհերը, կդիմենք, որ ինչպես միշտ, այս անգամ ալ աղաչ Պուլկարիայի կառավարությունը միջամտե թուրք կառավարության առջև դադարեցնելու համար հալածանքները ընդդեմ խաղաղ հայ ժողովուրդին թուրք կայսրության սահմաններու մեջ»[14]։ Այսպիսի բազմաթիվ նամակներ ու հեռագրեր էին ուղարկվում բուլղարական իշխանություններին ինչպես երկրի ներսից, այնպես էլ սփյուռքի մյուս գաղութներից։

1915 թ. օգոստոսի 10—12-ը Սոֆիայում տեղի ունեցավ Բուլղարական սոցիալ-դեմոկրատական կուսակցության 21-րդ համագումարը, որն ընդունեց բողոքի բանաձև ճնշված ժողովուրդների պաշտպանության օգտին։ Բանաձևի երկրորդ կետում ասված էր. «Համագումարը ամենամեծ վրդովմունքով բողոքում է հայ ժողովրդի ազատագրման համար մարտնչող մարտիկներին կախաղան բարձրացնելու դեմ, որոնց պայքարը ուղղված է թուրքական կառավարության այն սարսափելի գազանությունների դեմ, որին ենթարկված է այսօր անպաշտպան հայ ժողովուրդը։ Թուրքական կառավարությունը որոշել է պատմության բեմից վերացնել մի ամբողջ ժողովուրդ, Թուրքիայում ռազմակալված-ատիրական վերնախավի իշխանությունը ամրապնդելու համար»[15]։ Բլագոևյան կուսակցությունը այս բանաձևին ավելացրեց բուլղարական կառավարության նախագահ Ռոդոսլավովին ուղղված դիմում՝ պահանջելով նրա միջամտությունը ջարդերը կանխելու համար։

Հայ ժողովրդի ողբերգությունը, կոտորածներն ու գաղթերը, նրա հերոսական պայքարի պատմությունը արտացոլեց բուլղար բանաստեղծ, հեղափոխական գրող և հայ ժողովրդի մեծ բարեկամ Պեյո Կրաչոլով Յավորովը իր «Հայեր» քերթվածում։ Այն բազմիցս թարգմանվել է հայերեն։ Առաջին թարգմանողը եղել է հայտնի բուլղարահայ իրավաբան, հրապարակախոս, Սովետական Հայաստանի բարեկամ Ստեփան Հինդլյանը։

---

13 «Поход». София. 1941, април 27.

14 «Հայաստան». Պլովդիվ, 15 հունիսի, 1915։

15 «Работнически вестник», София, 1915, август 15.

Տարագիրներ են նրանք բեկոր են ընչին՝
Ոսոխներից հալածված քաջակորով մի ազգի,
Եվ զավակներն են զրկված հայրենիքի իրենց հին,
Որ ողջակեզն է դարձել անօրինակ սխրանքի։

Ինչպես նախիրը քաղցած գազանների ոռմակից՝
Նրանք փախել են, ցրվել աշխարհներում հեռավոր,
Եվ սպառնում է նրանց շառաչումով զայրագին,
Բնաջնջել հիմնովին ոսոխի թուրն ահավոր։

Ոտաբոբիկ, վշտաբեկ, պատառոտված շորերով,
Հայրենիքից անջատված, նրանք գինի են խմում,
Եվ ձգտելով մոռանալ տանջանքները բյուրավոր,
Նրանք այնպես են երգում, որ կարծես լաց են լինում[16]։

1915 թ. հոկտեմբերի 13-ին Բուլղարիան մտավ պատերազմի մեջ։ Մի շարք հայերի հետ բանակ կանչվեց Բուլղարական կոմունիստական կուսակցության բոցաշունչ մարտիկ Ստեփան Շահբազյանը։ Նա այստեղ էլ շարունակում էր գործել ընդդեմ թալանչիական պատերազմի։ Տիրապետելով ֆրանսերենին, գրում էր թռուցիկներ, անցնում հակառակորդի խրամատները և տարածում ֆրանսիական զինվորների մեջ։ Թռուցիկներից մեկում նա գրում է. «Մեր գընդում մեծամասնությունը բանվորներ ու գյուղացիներ են։ Մեր մեջ չկան ոչ մի գործարանատերի կամ գեներալի որդիներ։ Բոլորս պրոլետարներ ենք։ Երևի ձեզ մոտ էլ դրությունը նույնն է։ Ինչո՞ւ ենք միմյանց հետ կռվում, չէ որ մեզ ոչինչ չի բաժանում։ Չէ՞ որ բոլորս ցանկանում ենք տուն վերադառնալ։ Եղբայրական ձեռք ենք մեկնում ձեզ։ Կորչի՛ իմպերիալիստական պատերազմը»[17]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը նոր խթան հանդիսացավ բուլղարական բանակում հեղափոխական տրամադրությունների և զինվորական հուզումների ուժեղացման համար։

Ետպատերազմյան ժամանակաշրջանում, հեղափոխական շարժման բուռն վերելքի տարիներին բուլղարահայ բանվորները Բուլղարական կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, դարձան բուլղար ժողովրդի սոցիալ-դասակարգային շարժումների մասնակիցը։ Այդ ժամանակաշրջանում հայ-բուլղարական համագործակցությունը, Մեծ հոկտեմբերի ու Հայաստանում սովետական կարգերի հաստատման ազդեցության ներքո, հասավ պրոլետարական ինտերնացիոնալիզմի բարձր աստիճանի։ Բլագոևյան-Դիմիտրովյան կոմունիստական կուսակցության շարքերում դաստիարակվեց և աճեց հայ կոմունիստների այն սերունդը, որը գլխավորեցին Ստեփան Շահբազյանը, Տիգրան Խմիչյանը, Գրիգոր Շիշմանյանը, Անդրեաս Հակոբյանը, Հարություն Մելքոնյանը, Գառնիկ Թյությունճյանը, Արտաշես Ասլանյանը, Արմենակ Թազվորյանը, Գաբրիել Գաբրիելյանը և շատ ուրիշներ։ 1919 թ. ԲԿԿ ցուցումով հայ փոքրամասնության մեջ ստեղծվում է կոմունիստական սեկցիա և տպագիր պրոպագանդայի ու ագիտացիայի կոմիտե, որը «Մամուլի կոմիտե» էր կոչվում։ 1920 թ. ԲԿԿ կենտկոմի քարտուղար Վասիլ Կոլարովի նախաձեռնությամբ «Մամուլի կոմիտեն» Պլովդիվում լույս ընծայեց սփյուռքում առաջին հայ կոմունիստական պարբերականը՝ «Կարմիր լուրերը»[18]։ 1921 թ. «Կարմիր լուրերի» նոյեմբերյան համարն ամբողջությամբ նվիրված էր Հոկտեմբերյան հեղափոխությանը։ Բուլղար աշխատավորները մեծ խանդավառությամբ ընկալեցին

---

16 Տե՛ս «Սովետական Հայաստան». Երևան, 14 հունվարի, 1958, թարգմ. Համո Սահյանի։

17 Митко Иванов. Степан Шахбазян. София, 1964, с. 21.

18 Централен Партиен Архив. София, ф. 3, оп. 4, ае. 7, л. 17.

խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում։ Սովետական Հայաստանի առաջին տարեդարձը նշվեց Բուլղարիայի բոլոր հայաշատ քաղաքներում՝ Պլովդիվում, Ռուսեում, Վառնայում, Սոֆիայում և այլուր, որտեղ բուլղարահայ աշխատավորները մեծ աշխատանք ծավալեցին Սովետական Հայաստանին նյութական օգնություն կազմակերպելու գործում։ Ստեփան Շահբաղյանը առաջին հայ կոմունիստն էր, որ 1922 թ. սփյուռքից մեկնելով Սովետական Հայաստան, վերադառնալով բուլղարահայերին պատմեց տեղի ունեցած մեծ փոփոխությունների մասին։

Բուլղարահայ աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության համար մեծ նշանակություն ունեին բուլղար կոմունիստների հոդվածները «Կարմիր լուրերում», ինչպես օրինակ՝ Պլովդիվում գործող կոմունիստ Նիկոլա Գինևի «Նոր մայիսի մեկ ու նոր Հայաստան» առաջնորդող հոդվածը։ Այնտեղ Ն. Գինևը, խոսելով Արևելքում, այդ թվում Հայաստանում հաղթանակած սոցիալիստական հեղափոխության մասին, գրում է. «Քանի մը տարի առաջ Եվրոպայի մեջ ո՞վ կրնար հավատալ, թե ձյունապատ Արարատի վեհապանծ գագաթները պիտի տեսնեն ընկերային հեղափոխության հաղթականորեն ծածանվող դրոշակները Հայաստանի դաշտերուն մեջ, Ալպերու դագաթներեն առաջ, որոնք կը բարձրանան Եվրոպայի մեծ կապիտալիստական պետություններու սահմաններու վրա։

...Իսկ ձեր ամենքը, հայ հեղափոխական ժողովրդին ճշմարիտ դավակները, ցրված ամբողջ աշխարհի վրա, Մայիսի մեկին ճակատնիդ պարծանքով բարձրացուցեք, որովհետև Խորհրդային Հայաստանի դավակներն ու պրոլետարական ազատագրումի արժանի ռազմիկներն եք, ուր որ ալ գտնվիք։ Հեղափոխական ազատագրական պայքարի փառավոր օրերը դարերու գործն է որ կը կատարեն։

Կեցցե՛ Խորհրդային Հայաստան»[19]։

1922 թ. «Կարմիր լուրերը» վերանվանվեց «Նոր աշխարհ»։ Թերթը ցույց էր տալիս, որ իսկական հայրենասերներ են նրանք, ովքեր ապրում են իրենց հայրենիքի հույզերով ու նրա հաջողություններով։

1922 թ. Թուրքիայում՝ Զմյուռնիայի, Նիկոմեդիայի, Բյութանիայի, Արևելյան Թրակիայի և Կոստանդնուպոլսի շրջաններում 1915 թ. սպանդից փրկված հայության բեկորները քեմալականների հալածանքների հետևանքով արտագաղթեցին Եվրոպայի զանազան երկներ, այդ թվում Բուլղարիա։ Ալեքսանդր Ստամբոլիյսկու կառավարության որոշմամբ մոտ 25000 հայեր ապաստանեցին Բուլղարիայում։ Բուլղարական ժողովրդական ժողովի պատգամավոր Թոդոր Թոդորովը ջերմորեն պաշտպանեց տարագրված հայերին Բուլղարիայում ապաստան տալու որոշումը։ Նա իր ելույթում ասաց. «Քաղաքական տարագրվածներին ապաստան տալը պատվավոր ավանդույթ է դարձել բուլղարական կառավարության համար։ Հիշեցեք 1896 թ., երբ Թուրքիայում 25000 հայեր ջարդվեցին[20] և այդքան էլ, խուսափելով թուրքական սվիններից, արտագաղթեցին և ապաստանեցին Բուլղարիա։ Այդ ժամանակ մեր շահերն ու հարաբերությունները պահանջում էին սուլթանական Թուրքիայի հետ լավ լինել, քանի որ Թուրքիայում բնակվում էին մոտավորապես մեկ միլիոն բուլղարներ։ Սուլթանը պահանջեց ապաստան չտալ հայ գաղթականներին։ Բուլղարական կառավարությունը մերժեց և սուլթանին պատասխանեց, որ մենք աղատ ենք շընորհիվ այն բանի, որ գտնվեցին մարդիկ, որոնք ելնելով մարդասիրական սկզբունքներից, բաժանեցին մեր տառապանքները, հետևաբար մենք չենք կարող մերժել և ապաստան չտալ այդ մարդկանց, որոնք խուսափելով ձեր սվիններից ու կոտորածներից ապաստան են փնտրում մեզ մոտ։ Մենք որպես ժողովուրդ մեր մարդասիրական ու երախտապարտության պարտքն ենք համարում նույնիսկ մեկ գաղթականին ապաստան տալը»[21]։

---

19 «Կարմիր լուրեր». Պլովդիվ, 1921, № 5։ Ռ. Հ. Խաչատրյան. նշվ. աշխ., էջ 92—94։

20 Այս թիվը ճիշտ չէ։

21 «Պալքանյան մամուլ». Սոֆիա, 21 մայիսի 1942։ Թարգմանված է բուլղարերեն տպված հոդվածից։

Ալեքսանդր Ստամբոլիյսկու կառավարության որոշման մեջ ասված էր. «Բուլղարական կառավարությունը և ժողովուրդը իր այս դժվարին օրերին չեն լքում ավանդական դարձած բարեկամական վերաբերմունքը հայերի նկատմամբ»[22]։ Բուլղարական սահմանը բացվեց հայ տարագիրների առջև և նրանք հանգրվանեցին Բուլղարիայի տարբեր շրջաններում։

47—50 հազարի հասնող բուլղարահայ գաղութը մասնակից դարձավ բուլղար ժողովուրդի հասարակական-քաղաքական կյանքին և երկրի տնտեսական ու մշակութային նվաճումներին։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ ֆաշիստական Գերմանիան պատերազմ հայտարարեց Սովետական Միությանը, բուլղար և հայ աշխատավորները Բուլղարական կոմունիստական կուսակցության առաջնորդությամբ պայքար ծավալեցին ֆաշիզմի դեմ՝ ակտիվորեն մասնակցելով դիմադրական շարժմանը։ Բուլղար ժողովուրդը իր հազարավոր զոհերի շարքում վառ է պահում Հերմինե Ռազգրադչյանի (Սաշկա), Հարություն Պողոսյանի, Հակոբ Պարոնյանի, Կարապետ Խաչատուրյանի և բազմաթիվ հայ մարտիկների հիշատակը, որոնք զոհվեցին թշնամու հետ անհավասար մարտերում։

1944 թ. սեպտեմբերի 9-ին Բուլղարիայում, սովետական բանակի անմիջական օգնությամբ հաստատվեց «Հայրենական ճակատի» ժողովրդական իշխանությունը։ Սովետական Միության անշահախնդիր օգնությամբ բուլղար ժողովուրդը սկսեց կառուցել իր սոցիալիստական հայրենիքը։

1945 թ. հունվարի 21-ին Սոֆիայի հայկական հասարակայնության առաջ ունեցած իր ելույթում, Հայրենական ճակատի ազգային խորհրդի նախագահ Ցոլա Դրագոյչևան ասաց. «Մենք երբեք չենք մոռանա, որ եղբայրական հայ ժողովրդի պատմությունն ու ճակատագիրը շաղկապված է բուլղար ժողովրդի պատմության ու ճակատագրի հետ։ Հայ ընկերները մեզ հետ էին պայքարի բոլոր դիրքերում։ Նրանք ղենքը ձեռքներին կյանքի գնով մեր կողքին մարտնչեցին թշնամու դեմ»[23]։

Սոֆիայում հրատարակվող «Слово» թերթը գրել է. «Հայերի և բուլղարների միջև անկեղծ և խոր համակրանքը արդյունք է նույնանման պատմական ճակատագրի, որը լի է բազմաթիվ սառապանքներով ու գոհերով։ Մեր պատմական կապերը ստեղծվել են հին դարերում, շարունակվել միջին դարերում և հասել մեր օրերը։ Առանց դժվարության կարելի է նկատել, որ երկու ժողովուրդների դարավոր համագործակցությունը իր հետքերն է թողել նրանց մշակույթի զարգացման պատմության մեջ։ Մենք վստահ ենք, որ երկու ժողովուրդների համագործակցությունը մղելու է նրանց դեպի երջանիկ եղբայրական օրեր»[24]։

Հայ և բուլղար ժողովուրդները Սովետական Միության ազգերի եղբայրական օգնությամբ, սոցիալիստական երկրների ընտանիքում գտան ազգային վերածնության, տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացման իրենց ճշմարիտ պատմական ուղին։

Մեզ Ցավորովն է առաջին անգամ
Ծանոթացրել իր հայանի երգով,—
Ինձ համար հեռու, երկիր դյութական,
Քո տառապանքով, քո երաղանքով։

Մենք միասին ենք մաքառել դարեր
Ընդդեմ միևնույն բռնակալ, լծի,
Մեր ճամփին հույսը ջահեր է վառել
Մեծ արդարության, մեծ լուսաբացի։

---

22 «Зöра». София, 1922, № 1036.

23 «Երևան». Սոֆիա, 22 հունվարի 1945։ Զ. Մ. Ղասաբյան. Հայ-բուլղարական բարեկամության պատմությունից. Երևան, 1978, էջ 79—80։

24 «Слово». София, 1939, февруари 18.

Եվ Թումանյանն է այս հույսը երգել,
Եվ մեր Բոտևը, հավատով խորին,
Եվ մեզ նույն բախտն է այդ լծից փրկել՝
Եղբայրությունը ժողովուրդների։

Ու մենք քայլել ենք երգերով նրանց,
Օվ հաղթանակել գոտեմարտերում,
Մինչ Հոկտեմբերի լույսը փառապանծ
Շողաց պատմության երկնակամարին[25]։

СТРАНИЦЫ ИЗ ИСТОРИИ АРМЯНО-БОЛГАРСКИХ СВЯЗЕЙ

З. М. КАСАБЯН

(Резюме)

Исторические связи армянского и болгарского народов имеют многовековую историю. Начиная с VI века вследствие насильственного переселения армян византийскими императорами на Балканском полуострове возникали армянские колонии, которые в дальнейшем имели большое значение в экономической, политической и культурной жизни Византии и Болгарии. В эпоху османского ига росло и крепло духовное братство армян и болгар. Многовековые традиции братской дружбы между обоими народами усилились при освобождении болгар от османского ига, а в тяжелые годы армянских погромов и резни тысячи армян нашли убежище в Болгарии. В период между первой ни второй мировыми войнами армяне в Болгарии вместе с болгарскими трудящимися под руководством БКП активно боролись за освобождение от социального и политического гнета. Эта совместная деятельность в годы фашистской оккупации вылилась в вооруженную борьбу за освобождение страны от гитлеровских захватчиков.

---

25 «Գրական թերթ». Երևան, 27 մարտի, 1966։ Բանաստեղծությունը Նիկոլաս Մարանդոպովի, թարգմանությունը՝ Վ. Կարենցի։